



ԼՐԱԳԻՐ

Պոլսի հիմ. Տարեկան 150դ. կանխ
Լեցանակայ 80 ..
Գաղափար հիմ. Տարեկան 180 ..
Լեցանակայ 100 ..
Այլ բիւլ 1 ..
Ծանուցանման տողը 2 ..

Դուք գացած լրագրաց ճամբու ծախքը
Խնայողութեան վրայ է:
Լրագրաց վերաբերեալ մանակ կամ որ եւ
իցէ գրութեան Լեցանակայ Տարեկան
պիտի աւելուի. եւ ճամբու ծախքն ալ
դրկողին վրայ է:

ԱՊՐԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ

ՀԱՍՏԱՆԴՆՈՒՊՈՒՄ 16 ՅՈՒՆԻՍ 1866

ԲԱՆԿԱՅԻՆ

Հաշտութեան հաւանականութիւններ
ըր կաւելան և հնարաւորաբար զննարարաբար
եռեւ, որ այսօր կը վերջանայ, խաղաղութեան
վերահաստատումը յուսալի կը թը
ւի. Գաղղիոյ Գերմանական ինքնիշխանութեան
վրայ Բրուսիոյ հետ միարմեղով հաշտութեան
տախտակի վրայ ստորագրելու Լատւիոյ
ներկայացուցիչներ և այն ալ ընդունելու է:
Իսկ զգալի կրտսեր թէ Բեռլին իշխանը
Բրուսիոյ կողմէն չորս պայման կառաջարկէ,
որք՝ ինչպէս արդէն ծանուցած ենք, անընդունելի
կը համարուէին. Սակայն պաշտօնական
Մանիֆէստն այնպիսի պայմաններու
առաջարկութիւն ստեղծ հանելով, ծանոց թէ
Գաղղիոյ կառավարութեան և Բրուսիոյ
Թագաւորին մէջ եղած յարաբերութիւններ
ըր խիստ լաւ վիճակի մէջ են և թէ հաշտութեան
բանակցութիւններն յառաջ կը տարուին և կը
յուսուցուի որ քանի մ'օրէն բարի վիճակ
մը կ'ունենան:

Ըստ յուսուցուցիչ պարագայներէ
ն, որք թեպէտ կատարեալ հաստատութիւն
գաւազան են, բայց արդէն խաղաղական
արգելաբար մը կը խոստանան. Լատւիոյ կը
յուսուի որ Ա. Ենեպիկը Գաղղիոյ թողով
Նարոյէն կայսրն իր կողմը կը շահի, և եւ
թէ հարկ ըլլայ Գաղղիոյ զինեալ միջամտութիւն
մը կրնէ Բրուսիոյ և Խաղղիոյ հետ իր
ունեցած վեճը լուծելու համար. Բայց
Նարոյէն կայսրն այնպիսի գահաձեւ ընթացքի
մը մէջ չի նկատ, և Խաղղիոյ ինքնապաշտպանութիւնը
Գաղղիոյ դէմ չգրգռելով, թող տուաւ որ
Ա. Ենեպիկի երկրին վրայ յարձակին և իրենց
արշաւանքն անարգել յառաջ տանին.
Լատւիոյ ապագէս օտար օգնութիւններէ
յոյր կտրելով (քանի Ռուսիոյ ալ չէզոք
մնալու յայտարարութիւն կրնէ), Գաղղիոյ
առաջարկած հաշտարար պայմանները
չէր կրնար մերժել:

Յիշեալ պայմանները տակաւին պաշտօնական
կերպով ծանօթ չեն մեզ. սակայն արժանազատ
լրագրիչներու խօսքին նայելով Գերմանական
ինքնիշխանութեան գահացուցիչ կերպով
կը լուծեն. Գերմանական ներկայ գաշտակցութիւնը
պիտի լուծուի և նոր գաշտակցութիւն մը
պիտի հաստատուի, որուն մէջ Բրուսիոյ և
Լատւիոյ բողոքացուցիչ մաս չպիտի կազմեն.
այլ գաշտակցութեան մը պիտի կրնան միանալ.
Լատւիոյ երկրներն ամբողջ պիտի պահուին
(բաց ի Ա. Ենեպիկէն որ Խաղղիոյ պիտի արուի),
բայց Լատւիոյ դքսութեան վրայ ունեցած
իրաւունքը Բրուսիոյ պահանջած պատերազմ

մի ծախուց փոխարէն անոր պիտի թողու.
Բրուսիոյ Թագաւորն իր երկիրներուն հետ
պիտի միացնէ Էլզովի Զորքէն յիս Կէր
լենպուրկի, Էստ և Պրուսիոյ դքսութիւնները,
որով իր Ժողովուրդը թիւը 18 միլիոնէն
25 միլիոնի պիտի հասնի. Ունի գեալ Բրուսիոյ
արեւմտեան սահմանադրութիւնը պիտի ըլլայ.
Ունի և Մեծ գետերուն մէջ եղած գաւառներէն
հողային փոխարկութեան պիտի արուի իրենց
երկիրները կողմնորոշ իշխանաց. Ստորին Ունի
մէկ երկու գաւառներուն հրաւեր պիտի ըլլայ
որ կ'ամ Գաղղիոյ կ'ամ Ունի, իշխանութեանց
և Պատենի հետ միանան. Հաննովերի և
Սաքսոնիոյ Թագաւորութիւնները և Սաքսոն
դքսութիւնները (այսինքն Մէն գետէն անդին
եղած հիւսիսային Գերմանիոյ բոլոր տէրութիւնները)
Բրուսիոյ հետ զինուորական գաշտակցութիւն մը պիտի
կազմեն, որուն մէջ Լատւիոյ ամենէն չափի
խառնուի. Մնացած գերմանական տէրութիւններն
ալ միայն իրենց մէջ գաշտակցութիւն մը պիտի
կազմեն, որոյ հետ Լատւիոյ ալ կրնայ միանալ.
Եւ թեպէտ ասոնք հիւսիսային Գերմանիոյ
տէրութեանց հետ մտքախօս, առեւտրական, և
այլ գաշտակցութեան պիտի կրնան ընել, բայց
քաղաքականաբար բոլորովն բաժնուած պիտի
ըլլան անոնցմէ:

Ըստ կերպով հիւսիսային և հարաւային
Գերմանիոյ իրարմէ կը բաժնուին, հիւսիսին
մէջ Բրուսիոյ միահեծան տէր և զրաւի
կըլլայ, իսկ հարաւային Գերմանիոյ տէրութեանց
ալ Լատւիոյ կրնայ զրաւի ըլլալ, բայց իր
առաջին աղքատութիւնը չի կրնար ունենալ
այսուհետեւ:

Սակայն այս նոր կացութիւնը գերմանացուց
աղքատի գաղափարն ալ հաճելի պիտի ըլլայ.
Ըստ համար ինչպէս որ նախկին թաց թուով
ալ կրնէինք, գերմանական խորհրդարանին
բանակէր ընթացքը պէտք է դիտել. Նարոյէն
կայսրը 1859 իտալական պատերազմէն ետեւ
այսպիսի գաշտակցութիւն մ'ալ Խաղղիոյ մէջ
հաստատել կուզէր Պապին նախագահութեան
ներքեւ, բայց խաղաղի իրենց միութիւնն
առեւտրական հիման մը վրայ հաստատելու և
Վաթիկան ալ չուզէր հակառակել. Հաւանական
է որ նոյնն որ նոյն շարժումը Գերմանիոյ
մէջ ալ տեսնենք:

Միւս կողմէն թեպէտ պատերազմը
գաղափար, բայց պատերազմական գեղքերն
ընէ արագ արագ յառաջ գացին. Լատւիոյ
յիւր բոլոր Պոլսեական իրենց թշնամեաց ձը
գեղէ ետեւ, Սորաբիոյն ալ քաշուեցան և
Օլմուցն իսկ պարզելով իրենց զօրութիւն

ները Դանուբի երկրքը փոխադրելին, Բրուսիոյ
յաջորդ թիւներն անոնց հետ կը շարունակեն.
Թագաւորանի իշխանը յուլիս 16ին Օլմուցի
առջեւ աւստրիական զորքն հետ գործուելով
16 թիւանոթ առեւեր է. Օլմուցի և Ա. Ենեպիկի
մէջ հաղորդակցութիւններ կ'արեւ են, վասն
զի միշտ երկու քաղաքներն իրարու կ'ապոյր
կախուղային միութեան կետք. Լատւիոյ
պարկ բրուսիացուց ձեռքն անցեր է. Լատւիոյ
զատ բրուսիացիք Դանուբն անցնելով
Հունգարիոյ մասն են. Բրուսիոյ Թագաւորը
Բրուսի մասն տան յայտարարութիւն մը
հրատարակելով կրտսէ, որ եթէ իր արար
դար գտան յաղթէ, այն տան կարելի է ժամանակ
կուգայ որ Հունգարիոյ պէս Պոլսէմիս և Սորաբիոյ
ալ իրենց աղքատիւնը պատակին հասնին.
Լատւիոյ կայսրն ալ հունգարացուց յայտարարութիւն
մ'ուղղելով ի զէն կը հրաւիրէ զանոնք իրենց
կայսեր և երկրին պաշտպանութեան համար:

Գաղղիական Բրէս լրագրին մէջ հետեւեալ
կը կարդանք:

«Մեծագէս կը սխալն անոնք որ կը կարծեն
թէ Գաղղիոյ կառավարութիւնը մինչև հիմա
ասեղնաւոր հրացանն ուղարկութիւնն ունի
իրաւ չէ. Տանիսարքայի պատերազմէն ետեւ
որոշուեցաւ որ զօրաց ներկայ հրացաններուն
տեղ ասեղնաւոր հրացաններ շինուին.
Բայց որովհետեւ 50 միլիոն ֆրանք ծախուց
կը կարօտէր, խնայութեան գովելի խորհրդով
որոշուէր որ քիչ քիչ և հետզհետէ շինուին.
Դարմի բանակին մէջ եղած փորձերն
ապացուցին որ մեր գորականներուն երեք
չորս օր փորձութիւն բաւական էր այս նոր
հրացանը գործածելու:

«Պատերազմական վարչութիւնն արդէն
50000 ասեղնաւոր հրացան շինել տուած էր
կատարելագործեալ տեսակէն, բայց երբոր
հասկցուեցաւ որ մեր զինարաններուն մէջ
գտնուած հրացանի գլխները խիստ թեթեւ
ծախքով և քիչ ժամանակ մէջ կըրնային նոր
գործեան փոխուիլ, որոշուեցաւ որ այս փոխութեան
հոգ տարուի:»

«Այն լրագրին մէջ կը կարդանք նաեւ հետեւեալ:

«Ստոկոլմի պատերազմէն ետեւ Լատւիոյ
թուոյ նուազութիւնը զարմանալի կերպով
յայտնուեցաւ. Ա. Երջին հաշիւներուն նայելով
Պէտէտէր մարտախոս հինգ զօրարանակ
միայն ունէր ձեռքը, իւրաքանչիւրը 30-40
հազար զօրականէ բաղկացեալ, բայց կըլլայ
ընդամենը 150էն 200 հազար հոգի. Պատերազմին
ժամանակն ալ ուրիշ օգնութիւնն ունեցած
չէր. Ընդ, այս հինգ

գործարաններն երեքը՝ ութ օր շարունակ առանձին պատերազմներուն մէջ կռուեցան։ Ուստի Սատովայի պատերազմին ժամանակ թիւերնին շատ նուազած էր։

« Իսկ Բրուսիայից թուով շատ աւելի էին։ Ութ գործարանակ ունէին օր 40-ական հազարէն 320 հազար մարդ կրնէ։ Կատարդ կռիւներուն մէջ ալ գործերնին յաջող ելաւ թաղով խիստ քիչ մարդ կորուսած էին։ Բասել է որ յաջողութեան նմարը միշտ իրենց կողմն էր։

« Եւստրիական գործը բարոյականը մինչև վերջին վայրկեանը չաւրուեցաւ։ Բայց յունիս 25էն մինչև 30 միլիոն կռիւներուն մէջ ամբողջ գործարածիներ, ամբողջ գունդեր, փառքեր էին։ Եւստրիական գունդը 30—40 պաշտօնակալ կորուսած էր։ Եւստրիական ամենայնիւ մեծ պատերազմը մինչև կէս օրէն ետքը սարսափելի կատարութեամբ միջեցին։

« Բրուսիայից հրացաններուն այս պատերազմին մէջ ըրած մեծ յեղափոխութիւնն ալ չափազանց կարծիք մը չէ։ Եւստրիական 15 տարիէ ի վեր հնարուած է, զորհուրդին կերպով կոտորիլ է։ Բրուսիայից Պոսեմիայի պատերազմին սկիզբէն ի վեր գործածեցին զայն՝ այնպիսի եղանակաւ մը՝ որ Գաղղիոյ մէջ տեսնուած չէր։ »

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքիս դազիներէն Լա թիւերը լրացիրը՝ որ կէս պաշտօնական դերք մը ունի, երեքշաբթի առաւ թուովը երեք տեսակ դանձային նոր տնօրէնութեանց խօսքը ըրեր էր, զորս մեր հինգշաբթի առաւ թիւը թին մէջ յիշելով՝ երեքին ալ փաստաւորութիւնը յայտնուէր էինք։

Եւ թէպէտ Լա թիւերը լրացին երկու օր ետքը յայտարարութիւն ըրաւ թէ այն ազգերութիւնները պաշտօնական ազգերութիւններէ ելած չէին, բայց և այնպէս հասարակութեան և մանաւանդ Պօլսային վերայ խիստ դէշ ազգերութիւն ըրեր էին, ուրով Օսմ. արժէթուղթերը 33էն 31ի ինկան։

Պայտերական կառավարութիւնը յիշեալ հրատարակութեան անհաճոյ տպաւորութիւնը փարատելու համար հետեւեալ պաշտօնական զեկուցումն հրատարակել տուաւ Լա թիւերը լրացին երեք կուսան թուոյն մէջ։

« Լա թիւերը լրացին յունիս 10/24 ին օրը հանած 146 թիւ թերթին մէջ դերամական յօդուած մը կը պարունակէ որ խիստ ցաւալի տպաւորութիւն մ'ըրաւ։

« Բաւարացի բացորոշապէս կը հերքէ և կը դատարարուէ այն յօդուածին մէջ ներկայացեալ սկզբունքը և համարուած հնարքները։ Երբեք իր մաքէն անցած չէ 0/0 5ի նոր արժէթուղթեր ոչ ալ թղթագրամ հանելու խորհուրդը, և կարող է ընդհ. պարտուց արժէթուղթ ունեցողներուն նկատմամբ յանձն առած բոլոր պայմանները կատարել՝ առանց ամենեւին դիմելու այն ծայրայեղ միջոցներուն՝ որոյ գաղտնիարը չարամտութիւնը միայն կրցաւ վերադրել իրեն։

« Եւստրիական չարախում և անհիմն զրոյցները դատարարութեան համար հասարակութեան ողջմտութիւնն ալ անհուշապարտ միտքանի կառավարութեան հետ։ »

ԱԶԳԱՅԻՆ

Ինչպէս որ նախընթաց թուով ըսինք, Ս. Խաչկոյան, եկեղեցական ժողովը նկատելով որ Սոյ և Եղիմարայ աթոռներուն

և միաբանութեանց ներկայ բացառիկ վիճակին մէջ անհնար պիտի ըլլայ յիշեալ երկու աթոռոց միաբաններուն օրինաւոր կերպով ընտրելեաց ցուցակներ պատրաստել, որոշեր է ինքնին պատրաստել անոնց ընտրելեաց ցուցակները։

Բայց այս պարագային մէջ կարեւոր կէտ մը կայ, որ չենք կարծել թէ պատկառելի ժողովին խոհական ուշադրութեան վերայած ըլլայ։ Ընտրելիները փոխանակ ամենեւեւ յիշեալ միաբանութեանց անդամաց մէջէն ընտրուելու՝ մէկ քանին դուրսէն ընտրուելու են, ինչպէս են Սոյ համար Եւստրիական առաջնորդ Գեր. Երիստակէս եպիսկոպոսը, և Եղիմարայ համար ալ Խորրմեան Գեր. Սեդրակ վարդապետն ու Բաղէշու Գեր. Երեմիա վարդապետը։ Ար լսենք թէ այս վերջիններուն հետ ընտրելի որոշուած Թոփուզեան Յակոբ եպիսկոպոսն ալ քանի մը շարաթաւաջ վախճաններ է։

Մեզ կը թուի թէ Ս. Խաչկոյան ժողովին յիշեալ միաբանութեան անդամաց մէջ ուրիշ արժանաւոր անձինք չգտնելով, որպէս կաները դուրսէն ընտրելու պարտաւոր է։ Եւստրիական անհուշապարտ պարզութիւնը չի կարող ընդհանուր ժողովոյն մէջ։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Պաթոյկիոսական Յանձնաժողովին տընտրելութեան համեմատ անցեալ երեքշաբթի օր եկեղեցական վիճակային ժողովը դուրսուցելով՝ Պաթոյկիոսական ընտրելեաց ցուցակը պատրաստած է ազգային Երեսփոխանութեան ներկայացուելու համար։

Ուստի որոշուեցաւ յառաջիկայ ուրբաթի օր (յունիս 22) Բնդհանուր ժողովը գումարել ազգային Պատրիարքարանի Մայր եկեղեցւոյն մէջ, ամենայն Հայոց սրբազան Պաթոյկիոսի ընտրութեան գործը կատարելու համար։

15 յունիս 1866

Ի. Պատրիարքարանի Հայոց Ս. Պօլս

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Եսկից տարի ու կէս առաջ Եզգային ընդհանուր տրոց հաւաքման ձեռնարկուած տունը թէ մանաւոր անձանց և թէ լրագրողներու միջոցաւ տարածայնութիւն մ'ուէր էր թէ ելմայի հոգարարութեան Եւստրիական էֆէնտին, որուն յանձնուած էր տրոց հաւաքման գործընթացին անօրէնութիւնը, հաւաքածոյ գումարները իր անձնականին անցուցած է։

Թէպէտ և յիշեալ Եւստրիական էֆէնտին առ Եւստրիական սրբազան Պատրիարք հայրն ուղղած գրերովը հերքած էր եղած ամբաստանութիւնը և ինքրած էր որ տրոց հաշիւը քննուի, սակայն վարչութեանց անկայուն վիճակին պատճառաւ գործը երեսի վրայ մնացած էր։

Խառն ժողովն Եզգային ելմայի վիճակին կարգադրութեան զբաղելու առթիւ՝ կարգադրեց նաեւ այս կախ մնացած հաշիւը գործին ալ, և վերահասու եղաւ որ տակէ առաջ յիշեալ էֆէնտինին գէմ եղած ամբաստանութիւնը անգի չունի։

Հետեւեալ արժան գատուեցաւ անոր գէմ եղած տարածայնութիւնները դադրելուցնելու համար արդարութեան պահանջած այս հրապարակական հատուցումը տալ։

Ս. Պօլս 30 յունիս 1866

Ի. Պատրիարքարանի Հայոց

Հայեպէն յունիս 2 թուով հետեւեալը գրուած է մեզ։

« Հռչակաւոր Եկեղեցոս եպիսկոպոսին ինքնակոչ կաթողիկոս ըլլալը և Բերիա դաւը խնայուցի ձեր հրամանոյր։ Բայց այդ գաղտնիքը՝ որչափ ազգին նախատինք ըլլալը աւելորդ կը համարվի մանրամասն գրել և սիրտերնիդ ցաւցընել։ Իր հետն է բերել Յաւութիւն եպիսկոպոս կրօնափոխը՝ որ քանի մը ամիս յառաջ կաթողիկոս քահանայն առջեւ ձգած՝ ողորմութիւն կը հաւաքէր Եւստրիական երթալու ծախուց համար Իր հետն է բերել ուրիշ մէկ եպիսկոպոս մ'ալ՝ որուն անունը անգամ հարցնել չէ ուղեր սիրտս Եւստրիական Բերիական Եւստրիական մահաւորներ հաւաքելու պաշտօնով Ս. Երջապէս հոս գաղտնի, մեր գերբաստանը բաւական էր մինակ զինքը Հայեպ չի մոռցնելու և արագ իրելու, բայց մտածեցինք որ Ս. արշուլութիւնը թող բռնելով չըլլայ թէ մեզ վըտանդ համար։ Ըստ որում աղղը հոս միտմիտ է։ (Եւ ինչ ըսես որ Բերիական թերթը բայց կարծես իրեւ երկրորդ Եւստրիական մը կը պաշտէ) անոր համար լուցցինք և Բերիական մտաւ, և այսօր քանի անգամ է դեշխին հետ տեսութիւն ընելով՝ « ես և թէմս Պօլս և Ս. արշուլութիւն չեմք ձանձուր, այսպիսի հարկաւոր տարիէ ի վեր այս կերպով կը ձեռնադրուին կաթողիկոսները, և բոլոր թէմիս ժողովուրդէն մահաւոր ունիմք ընելով՝ և դէմը հակառակորդ մը չըլլալով կը կարծէ որ եղաւ դիպ։ և ասոր համար իրիկուան լուս մասթիքաները աւելի է կը նետէ։

« Ս. արշուլ առաւօտ Բերիոյ ժողովուրդեան մահաւոր ստորագրել պիտի տայ։ մենք հիմա դիտողներէն ենք, և եթէ գիտնամք որ Ս. արշուլութիւնը մեզ կօգնէ կրնանք ծառայել ազգին նպատակին։ »

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզէն եկած հեռագրաւոր մը կը ծանուցանէ թէ Եւզղիոյ կառավարութիւնը ընտրական ինքրոյն վրայ ժողովուրդական գումարուներն արգիլել է, և այս արգիլքին պատճառաւ արիւնահեղ անկարգութիւններ կը ծագին Լանարայի մէջ։

— Էվրոթ—Հէրլո լրագրին խօսքին նայելով Պարտաւորէն եկող պատգամաւորներուն առաջարկած խնդիրները դռնացուցիչ կերպով լուծուելու յոյս կուտան։

— Հինգշաբթի առաւօտ Եւստրիական Եւստրիական արտահանութիւնը երեք տուն այրեցաւ։

— Էվրոթէն լուր կուտան թէ քուէռան յանկարծ հոն ալ երեսն եկեր է։

— Արշուլ թէ Մաքրի—քէօյի կայսերական փառօղարանին բռնկելուն պատճառ արշուլը հետեւեալ գէտքն եղեր է։ Փամիւռչա կապելու գործածուած հրէայններէն մէկը ուրաղով փամիւռչա մտուել մը բացած տուն, կրակ առեր և վառօղը բռնկել է։ Բայց բարեբաղդաւոր փառօղարանին միւս միջերանոցներն անփոխանգ մնացին։ Եւստրիական արշուլը պատահաբէն մեռնողներուն թիւը 72ի կը հասնի, որոց 60ը հրէայ են, 11 հայ և 1 տաճիկ, իսկ վերաւորեալներն են 24 հոգի, որոց 3ը հրէայ են, 17 հայ և 4 տաճիկ։

— Ս. օրսէն լուր կուտան թէ յունիս 7ին Թուրքիոյ գործառնոցին մէջ հրդեհ պատահելով՝ 3 փամու մէջ մեկիւր գարձեր է այն հոգիակալ չէնքը՝ որ 9500 գործական և 1000 ձի կը պարունակէր։ Բաղլամ հան

գերաձեռնէն նստար և պատերազմական միջերը ալ նմանապէս բոցերուն ճարակ եղեր են : Արտուար 25 միլիոն հաշիւ կըլայ : Արտուար թէ 13 ալ զօրական բոցերուն մէջ մեռեր են :

Այսպիսի քաղաքական շփոթութեան միջոցին այս զեղեցիկ զօրանոցին այրիւր խիստ յաւալի կորուստ մ'է :

Այսպիսի և Ամիսի մէջ ալ աւաղաւ կուծիւնը շատցեր է :

— Սէյանիէն յուլիս 5/17 թուով գըրուած նամակ մը հետեւեալ գէպը կը պատմէ :

« Այլ քիչ օրերս հերենացի նաւ մը երկաթ նետեց Քէսէնարէի ծովածոցին մէջ : Օսմէլեղերաց պահապան զինուորներուն գլուխը՝ որ արպանիացի մ'է, խմանալով որ յիշեալ նաւին մէջ վառօդ կար, իր մարդոց մէկ քանիկն հետ նաւը գնաց խուսափելով թիւն ընելու : Օսմէլեղերաց ամառաները ճանքան նաւակը տակն 'ի վերայ ընելու փորձ ըրին, բայց չյաջողեցաւ : Այն ժամանակ կապած ելն նաւին մարդիկը միահնդոյն հրազեն տարակցին նաւակին վըրայ, որով արպանիացի զինուոր մը մեռաւ, ուրիշ մ'ալ վիրաւորեցաւ : Այս գաղաւթիւնին ընելէ ետեւ՝ հերենացի նաւն անմիջապէս երկաթն առաւ ու ծովածոցէն մեկնեցաւ :

— Անկախապէս Պաշտօնական անուն հերենացիին և իր ընկերները, որք անցեալներն Օսմանեան երկիրն արշաւելու փորձ փորձելով ձերբակալ եղած և հոս բերուելով ոստիկանութեան դուռը բանտարկուած էին, մանրամասն քննութեանց ենթարկուելուցան : Իրոք քննութիւններէն չկրցաւ հաստատուիլ թէ Յանստանի կամ Իսախոյ կառավարութիւնները երբեք քաջաբերութիւն տուած ըլլան յիշեալ քաղաքական ներուժն :

— Հելլենիսթ—Հելլենիսթ մէջ կը կարգանք :

« Այնքան առնուած նամակներ կը ծանուցանեն թէ Օսման պէյ անուն քիւրտ պէյ մը ուրիշ երկու աւաղապարտաց հետ Անիայ և Տիարպէքի մէջ հուլիսահարութիւն ընելով, մօտեցաւ Պէհմանի մօտ գիւղ մ'աւարի առեր և զիւրացուց զայս ալ 30,000 զուրուշ առեր ձգեր են : Տիարպէքի ի փաշան այս բանն իմանալով՝ աւաղապարտուն վաղիտեմ մը զօրք հաներ է, բայց ինչպէս որ դժբաղդարար սովորական եղած է, այս իշխանական գործը շատ ուշ էր : Օրքերը երեք աւաղապարտները չկրնալով բռնել, քսանի չափ մեղսակից ամրաստանեալ անձինք բանեցին, որոց շատը քննութեան տանն պատասխանեցին թէ իրենց մեծերն աւաղապարտութիւն ընելով ոչ միայն հարուստանալ կը յուսան, այլև կանխկալն որ Պէտերհան պէյ յիշ պէս օր մը կառավարութիւնէն ամսական, ասօժիկ և փաշայութիւն կընդունին : »

Յիշեալ լրագրին Պէրսէթէն գրուած նամակ մ'ալ կրտէ թէ Եսուսեֆ Քէրամի Լիբանանու լեռան անմատոյց կողմին աւաղապարտած՝ մերթ ընդ մերթ ասպատակութիւններ կընէ տալաւին : Անցեալները 400 մարդով լեռնէն վար իջեր և կայսերական զօրաց ասրուած պաշարը կողոպտեր տարեր է : Ասոր վրայ Տերվիշ փաշան Հալէպէն Լիբանան դարձեր է : Տալուսթ փաշան ալ 85 հոլի բանտարկեր է, որոց 2ը եկեղեցական ըլլալով Երուսաղէմի լատին պատրիարքին խնդրանքով թող տրուեր են : Քէրամի Գաղղիա խնդրիլ կուզէ, բայց որովհետեւ զաղղիական նաւելուն հրաման տրուած է

որ եթէ ներկայանայ՝ զինքը Օսմանեան իշխանութեանց յանձնեն, ուստի տէրութեանց հիւպատոսներուն հետ կը բանակցի եղեր որպէս զի ապահովութեամբ Լիբանանէն դուրս ելնելու կարող ըլլայ :

— Այնքանոցէն հետեւեալ կը գրեն թուով լրագրին :

« Այնքանոցի մէջ հասարակութեան ըզգացումը շատ գէշ վիճակի մէջ է : Թողերուն մէջ ժողովուրդը յայտնապէս կընէ թէ աւելի կուզէ Բրուսիոյ հպատակ ըլլալ քան թէ Եւստրիոյ վասն զի կըսեն, առաջին աւելի լաւ կը կառավարէ իր տէրութիւնն ու ժողովուրդը, մինչդեռ վերջինն ասոր հակառակն է : Ար հաստատուն թէ կայսրուհոյն Ռէշիդէն ետ դարձած տունն, երբ կայսրը երկաթուղոյն կայարանը գացեր էր, ծափահարութիւն ընող չէ գտնուեր : Այս խտրութեան վարժարանները դոյուած են և տղայք հիւանդանոցներուն մէջ վիրաւորեալ զինուորացի խնամ տանելու կը ծառայեն : Ըստի թիւն արդէն Այնքանոցի մէջ 8000ի կը հասնի : Բարեբաղդարար վերջերն ըստ մեծի մասին թեթեւ են : Այնքանոցի Պանքային պահետի գրամները դուրս զըրկուեցան, որոցմէ 56 միլիոն Ֆիօրին Բանուրի վրայ Հունգարիոյ Քոնօրն անուն ամուր բերքին մէջ պահուած է, և մնացեալ 70 միլիոնն ալ Ստորին Սիւրիոյ Մարդուրի քաղաքի երկաթուղոյն կայարանը կը պահուի, ուր զիշեր ցերեկ փաշա մը զօրք հրահրութիւն կրնէ : Սակայն եթէ Բրուսիայիք Այնքանոցի մանեն, բոլոր պանքայները սովորական կերպով իրենց գործը պիտի շարունակեն : »

— Բրուսիայիք Այնքանոցի մանելու ծանրայնելուն վրայ մանրամասն և ճիշդ տեղեկութիւններ տանալու համար զանազան հրահրք կը բանեցնեն : Անցեալները հիւսիսային Գերմանիոյ կողմերէն նկարիչ մը Այնքանոց գալով, կայսերական պոլիտալից վերապետուհիներուն հետ կը տեսնուի, բարեկամութիւն կընէ, և ինքզինքը բնութեան գեղեցիկութեանց վրայ զմայլող պատկերհան մը ձևացնելով, կը խնդրէ որ լեռանց կիրճերուն նկարչական տեղերն իրենց ցոյց տան, որպէս զի անոնց ուրուագիծը քաշէ : Այնքանոցի նկարչի նկար, չին խնդրը կը կատարեն, բայց մինչև որ միտքերնին կուգայ որ չըլլայ թէ բրուսիայի լատեմ մ'ըլլայ, և մինչև որ քոմի եղած թուղթերը քննելու համար վայն կը փնտրուեն, մարդն աներեւոյթ կըլլայ :

— Երբի պատերազմաց մէջ հեռադիրը մեծ գործ կը տեսնէ : Բրուսիայեաց զօրաբանակներուն կեդրոնատեղին որոշուածին պէս, հեռագրի գործակալները մերձակայ գտնուած հեռագրի կայարանը կերթան և անկից թեւ մը կերկնցնեն մինչև սպարապետին խնայարանը : Հեռագրի բոլոր պիտոյքն երկու թեթեւ կառքերու վրայ բեռցուած է, որոց մէկը ելքարական մարտկոցներն ու ասեղները կը տան, և միւսին վրայ ձողերը, թեթեւ ու պէտք եղած գործիքները գրուած են : Թեթեւը շարժական մեծ ճախարակներու վրայ փաթեթուած են, այն կերպով որ քանի կառքը յառաջ երթայ՝ կը քափուի և կերկնան : Երբ մնածուի թէ յուլիս 24ին բրուսիայիք Արաֆել թէյն ըսուած գլխակն առին, ուր օր մը յառաջ աւաղապարտ կը նստին, և անմիջապէս Պէրլինի հետ հեռապարտական հաղորդակցութիւն հաստատեցին, կրնայ հասկնալ

ուրիշ թէ այս միջոցն ի՞նչ աստիճան կօղնէ պատերազմող բանակի մը, և թէ գիտութիւնը որչափ յառաջ կը տանի պատերազմի արուեստը :

Մանուպէս բանակին կեդրոնատեղին պատերազմական թղթատարութիւն մը կը հաստատուի և ամեն օր թղթատարներ կը զըրկուին բանակին պահապան թիւերը :

Ա. Պոլս 2/14 յուլիս 1866

... խմբագիր Մասիս պատուական լրագրոյ :

Ներկեցէ ինձ ձեր էջերուն մէջ ներկայացնել անգլիական եկեղեցւոյ և Կոնսթանթնուպոլիսի միջոցով անգլիացի եկեղեցականի մ'ըրած տեսութիւնները, և զանոնք բողոքաւել այն աւարկութեանց հետ որք կը տեսնուին Եւստրիոյ 237 թուոյն մէջ :

1. « Անգլիոյ մէջ, կըսէ Եւստրիոյ, եպիսկոպոսական եկեղեցւոյն իբրեւ ազգային եկեղեցի քաղաքական օրէնքով հաստատուութիւն գտած է : »

Պատասխան. — Բոտ սկզբանց քրիստոնէական եկեղեցւոյ Անգլիոյ եկեղեցւոյ անգլիական պիտի ըլլար՝ եթէ քաղաքային օրէնքը հաստատուած ըլլար կամ ոչ, փասն զի առաջերոց ժամանակէն 'ի վեր անգլիացւոց ազգին միակ եկեղեցւոյն այն է :

2. « 1662ին, կըսէ դարձեալ Եւստրիոյ, 2000 եկեղեցական անձինք այս պաշտօնական (այսինքն Անգլիոյ եկեղեցւոյն ժամագիրքը դորձած եղաւ) յանձնառու ըլլալ « չուզելով իրենց պաշտօնէն հանուեցան : »

Պատասխան. — Այս 2000 անձինքն ըստ մեծի մասին եկեղեցական չէին բնաւ, այլ 1641-3ին յեղափոխութեան ժամանակ օրինաւոր կղերիկ տեղ գրուած էին : Իսկ օրինաւոր կղերիկ, որոց թիւը 6—7000ի կը հասնէր, իրենց պաշտօնէն անգլիկութեամբ դուրս ձգուեցան, փասն զի իրենց հաւանութիւնը կուտային այն եկեղեցական և քաղաքային օրինաց՝ որոց խղճի մօտք հնազանդելու պարտաւոր կը ծանօտէին ինքզինքնին, և չէին հաւանք ստորագրել այն « հանդիսաւոր ուխտադրութիւնն ու դաշններ » որ զեպիսկոպոսականութիւնը կը մերժէր : Երաւքսեալ և կեղեցականներէն շատը 1662էն յառաջ վախճանեցան : Սակայն Կոնսթանթնուպոլիսի եկեղեցւոյ և տէրութեան մէջ ամենէն սրբազան բաները տապալեցին : 1645ին խորհրդարանին մէջ հրամանագիր մ'ընդունել տուին, որ առհասարակ կարգերու ժամագրքին դորձածութիւնը « (այսպէս էր առհա իրենց կրօնական ներդրումութիւնը) և սոյն հրամանագրին դեմ գործողներուն վըրայ առաջին անգամին համար 5 լիւր, երկրորդ անգամին համար յոնցաւորը 12 ամիս բանտարկութեան կը դատապարտէր : Քրօմվել հրաման տուաւ որ դատաւորները ուրիշ փաստաւոր բաներու հետ զինեւ տուներն ու « ժամագիրքն ալ » արդեւուն : »

1649ին Պարոյոս Ե. Թաղաւորը մահուան դատապարտեցին, թէ և Ս. Պիլքը կը պատուիրէ քրիստոնէից որ իրենց թաղաւորները յարգեն. Ե. Պետ. Բ. 17. և այս պատուէրը Ներսիս իշխանութեան ժամանակ դրած է աւաքեալը : Այն տունը զանազան աղանդներ յերեւան ելան, որոցմէ ոմանք կիլիկիէն և միւսները կը հալածուէին իշխողաց կողմէն :

1660ին Թաղաւորական միապետութիւնը վերահաստատուեցաւ՝ անգլիական աղա

եալ կրեւն ուղ մնայորնքն այն տունն իւրենց վիճակները դարձան, արարալ մնացած եպիսկոպոսութիւնները լցուեցան և ժամանակը դարձեալ եկեղեցւոյ մէջ դործածուիլ սկսաւ: Ա՛յ երջապէս 1662ին խորհրդարանը «Միակերպութեան օրէնքն» ընդունեց, որ կը տնօրինէր թէ «Եկեղեցականք միայն կրնան եկեղեցւոյ արքիւնքները վայելել»:

Բայց այս օրէնքը պատահութիւն տուաւ աւանդ ուրք եկեղեցւոյ արքիւնքները յաւերժ տալիս էին, որ եպիսկոպոսական եկեղեցին ընդունելով իրենց պաշտօնին մէջ մնան: Եւ տներն իրենց խղճին տնտալով հրաժարեցան*:

3. — «Նոն-Քօնֆօրմիսթ եկեղեցի» ներուն Եպիսկոպոսական եկեղեցւոյն հետ ունեցած յարաբերութեան խնդրոյն դաւ լով կրտսեր թէ քրիստոնէութեան էական «վարդապետութեան կէտերուն նկատմամբ» ասոնց մէջ զրեթէ ընաւ տարբերութիւն «չկայ» և կրտսէ Եւտարեր:

Պատ. Եթէ այս այսպէս է, Նոն-Քօնֆօրմիսթներն անօգուտ տեղը Եպիսկոպոսական եկեղեցիէն կը բաժնուին: Ս. Գրոց հրամանին հակառակ. Տէն Յուդայի ԺԺ. Հռոմայեցւոց Ժ.Օ. 17. Ե. Վորն 1. 10. Ե. Վորն Գ. 3 և այլն: Ուրեմն Նոն-Քօնֆօրմիսթները մեզն հետ չեն միաբանիր քրիստոնէական հաւատոյ մէկ ամեւ նախարար կէտին վրայ որ կը պատուիրէ հաւատալ «ի մի և յաւաքեղական եկեղեցի»:

Եթէ այս կէտին վրայ Ենդղեական եկեղեցւոյ հետ միարանէին, անկից բաժնուած չէին ըլլար թէ՛ պապական ըլլալով և թէ՛ բողոքական:

4. — «Ս. Գրքէն ապացոյց չկայ որ «այժման Եպիսկոպոսական եկեղեցւոյն մէջ

«կրտսէ եպիսկոպոսի և քահանայի իշխանութեան զանազանութիւնն Եւտարեր» «ժամանակն ալ կար» կրտսէ Եւտարեր:

Պատ. — Բայց տե՛ս Տիտոսի Ե. 5. Օրինակ մը միայն բաւական է տալ վրայ. Տօքթոր Վրթման կրտսէ. «Եթէ մտածուի «որ բոլոր Կրտսէ Տիտոսի վերապետութեան յանձնուած էր, հանգերձ հոգեւոր «իշխանութեամբ» ի վերայ երկցանց և աւանդ եկեղեցիներուն, ընդունայն տեղը «բաւերու հետ խաղալ է վիճել թէ արդ» «եօք Ս. Պօղոս առաքեալը եպիսկոպոսութիւն հաստատած էր կամ ոչ»:

Տիտոս, ըստ Եւտարեր, ամեն քաղաքի երկցանց պիտի հրամայէր:

5. — «Նոն-Քօնֆօրմիսթները քրիստոնէական եկեղեցւոյ պաշտօնականներն «Քահանայ անուն տրուելուն ալ դէմ են, «ըստ որում կրտսէ, մեր մի միայն Քահանայն Քրիստոսն է» կրտսէ Եւտարեր:

Պատ. — Քրիստոս մեր մի միայն Մարգարէն և թագաւորն ալ է, սակայն թէ՛ հին և թէ՛ նոր օրինաց ներքեւ մարգարէներ և թագաւորներ եղած են: Հին օրինաց ներքեւ մարգարէները, քահանայներն ու թագաւորներն օրինակ են Քրիստոսի. իսկ նոր օրինաց ներքեւ քահանայները Քրիստոսի փոխանորդներն են: Ս. Պօղոս առաքեալ կրտսէ Եբր. Ժ. Գ. 10. «Ունիմք մեզ զսեղան» — 15. «Եւր» ի ձեռն նորա մատուցուող զպատարագ օրհնութեան յամենայն ժամ Եւտարեր: Եւ մեն անգամ Քահանայ բառը կը պատասխանէ Բրեզպիսթէր կամ Երէց բառին, որ յունարէն Բրեզպիսթէրս բառէն ելած է:

6. — «Նոն-Քօնֆօրմիսթները կը «մերժեն մանաւանդ այսպիսի նիւթերու «մէջ քաղաքային կառավարութեան օրէնք «դնելու իրաւունքը» կրտսէ Եւտարեր:

Եթէ օրէնքներն յօդուտ եկեղեցւոյ են, ինչո՞ւ համար պիտի մերժուին: Սակայն ոչ ոք Նոն-Քօնֆօրմիսթներուն չափ կառավարութեանն այնպիսի օրէնքներ կը պահանջէ, որ զեկեղեցին կը տկարացնեն, և զայն կը զրկեն հաւատացեալ կամաւոր նուէրներէն:

7. — «Սենք Պատ. Քրթմիսին հետ «միարան ենք թէ այլ և այլ եկեղեցեաց մէջ «միութիւն յառաջ ընկելու համար» հաւատոյ էական և ոչ էական մասերուն»:

«մանաւանդ Ս. Գրոց համաձայն և ոչ հաւաճայն բաներու մէջ զանազանութիւնը» «նեւ հարկ է. և թէ՛ ընաւ եկեղեցի մը չեկրնար ուրիշ պահանջել որ էական չեւ» «որդ բաներ յայտնաբերուին ընդունի» «Միայն սա մասին անկէ կը տարբերինք որ «վարդապետութեան մը էական կամ ոչ էական, և կամ բանի մը Եւտարեր չեւ» «քին համաձայն կամ անհամաձայն ըլլալը «որոշելու համար» մենք ուղղակի և միայն «Ս. Գրոց գիմել կուգենք, և ոչ ուրիշ որ «և իցէ ձայնի մը»:

Քանի որ արեգակն ու «նիւք, կանգնողներ և ճրագներ դործածելու «հարկաւորութիւն չենք տեսներ» կրտսէ Եւտարեր:

Պատ. — Եւտարեր կրտսէ նաւ 100 էն աւելի տարբեր պահանջներուն ամեն մէկը, որոց իւրաքանչիւրը Ս. Գրոց ուղղակի հեղինակութիւնը միայն կրնա ընդունի:

Բայց ասոնց ո՞րը կրնայ հաստատել թէ մնացած 99ը սխալ են, և ո՞վ պիտի վճիռ տայ:

Եկեղեցին «Սին և հաստատութիւն է՝ ճշմարտութեան»:

Ս. Տիմ. Գ. 15. Ուրեմն եկեղեցին Եւտարեր հաստատուած է անոր ճշմարտութիւնը քարոզելու և անոր ձայնը «մեր հոգեւոյն ականջաց հասցնելու համար»:

Քանզի ի՞նչ է Եւտարեր խօսքը, եթէ ոչ եկեղեցին» որ Եւտարեր խօսքին ճշմարիտ բացատրութիւնն է:

Նոն-Քօնֆօրմիսթները կաթոլիկէ Ս. Եկեղեցւոյն կը հետեւին երբ Միաշարժ թին օրը Եւտարեր պաշտօն մատուցանելու կը նուիրեն, վասն զի Ս. Գրքը մեզն պատուիրած չէ կիրակին սուրբ պահել, այլ՝ եկեղեցին կը պատուիրէ:

Նոն-Քօնֆօրմիսթներն եկեղեցւոյ ձայնը կը լսեն՝ երբ Պօղոսի թղթերը կը կարդան և կրնա ընդունի, իսկ Բաւնարաթի թղթերը չեն կարդար և չեն ընդունիր:

Ս. Գրքը չունի մեզ թէ Բաւնարաթի թղթերը կամ Յակոբու Եւտարանն աստուածային ներշնչութեամբ գրուած չեն, բայց եկեղեցին կրտսէ Եւտարեր Երեմիայի ունինք, սակայն թէ որ մեղեր ու մատախոյններ մեր երկիրը մթաքնեն և լոյսը ծածկեն, Երեմիայ «յառաջ զօրութեամբ» միայն կրնան փարատիլ:

Ընդունեցէք և այլն:

Զ. Յ. ԲԵՐԹԻՍ

Քահանայ Անդղիական եկեղեցւոյ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ		
ԴՐԱՄԱՅ ԱՐԺԱՂՈՒԹԻՒՆԸ		
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ	Հինգէր. 14	Ուրբաթ 15
16 ՅՈՒՆԻՍ	Ղուրուշ	Ղուրուշ
Օսմանեան լիրա Մէճ. . .	405	405
Քահանայ արծաթ . . .		
Էսհանը ունեւոր.	31.16	31.12
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 16 ՅՈՒՆԻՍ		
ԱՐՄՏԻՔ		
Յօրենքային կարծի		
» Խախտիլ »	23-30	
» Բուժ. Պալլէք »	24-26	
» Վառնա »	26-27	
» Խալապիլ կակոզ »	18-22	
» Կալազ »	60-00	
» Պուրկազ »	00-00	
Եգիպտացորեն կալազ		
Գարի »	40-44	
Մ Ն Տ Ա Ք Ս		
Պրուսա կարծ թէ ֆէ »	560-570	
» երկան »	560-580	
Շաքի հօխան ֆրանք »		
» Պարկաս »	45-50	

ՆԵՐՔԻՆ ԲԵՐԲ		
Բամպակ Պալլէքէք	Հօխայ	Ղուրուշ
» Կեյլէ »	»	—12
» Ասանա »	»	—13.10
» Ունաւորան »	»	—13.5
» Բուրք Էնկիւրի լուացուած »	»	—11
» » Էլուածաւած »	»	—00
» Պալլէքէք Էլուաց. »	»	—0
» Զէյրի Էնկիւրի »	»	—0
» Թոխա »	»	—00
» Զորու »	»	—00
» Մաղը սեւ »	»	—00
» Զերմակ »	»	—0
» Թիֆթի Էնկիւրի »	»	—40
» Աֆիօն Պալլէքէք »	»	210-220
» Բիթրէ Տերեւ լանուած »	»	00-00
» Սալէպ Տաճկաստանի »	»	—15
» Մեղրամմ գեղին Տրապիզոն »	»	—23
» » Մնասուղու »	»	—21.30
» Սուսամ Բուլէլի »	»	—
» Կուսաւաթի հոնա Բուլէլի Գիլէ »	»	—
» » Պանտրոմ »	»	—
» Զէթ Ալվալէ »	Հօխայ	—7.20
» Կիրիտ »	»	—7
» Աճառ (Սապօն) Գանալի »	»	—6.20
» » Միտիլի »	»	—5
» Բրինձ Խալապոս Բէշիտ »	»	—4
» Տիւնաթ »	»	—

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐԲ		
Խաչմէ Ուիո եւ Գալիո 400 հօխան	Հօխան	Ղուրուշ
950-1050		
Շաքար զուլա 6-10 լա. կնդ. »	»	—
» Զոլ. զուլա »	»	—290
» Փոշի »	»	—245
» Գալլ. զուլա »	»	—280
» Փոշի »	»	—240
» Սնաք (զալա) »	»	—670
» Պալլիզ (պիպէ) »	Հօխայ	—6
» Լեղակ (չիվի) Պէշկալ »	»	—135
» » Մատրաս »	»	—120
» Անուշաղը (Նոշաղը) »	»	—6.20
» Պողպատ (Զէլէք) »	մնասուղ	—180
» Կապար (Գուրուշ) »	»	—3.20
» Թիթիզ (Թէնէքէ) զոյգ մետ. »	»	—340
» Զինք տախտակ թիւ 7-12 Հիւ »	»	—6.20
» Երկաթ Անդ. Տոգաճիւ. կնդ. »	»	68-70
» Բեւեռցու »	»	72-73
» Բոլորակ »	»	135-140
» Ունալոյ »	»	120-130
» Քարֆիճա Վարիլ 39 Հիւ »	»	—132
» Խալիլալէճ Զէն. զոյգ մետ. »	»	—250
» Սրաւմալէթ Վիլէնա »	Հօխան	—15
» Թրիէտ եւ Գալլ. »	»	—14
Խմբագիր-Տնօրէն		
Կ. Ս. ԻԻԹԻԴԵԱՆ		
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ		
Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆՈՒԹ ԲԱՆ		